ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 03 2026թ.
№ ԱԳՆՈՒ/606

«Բիդեք» ՍՊԸ
ՀՎՀՀ 00450801
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նեկրասովի 86
էլ. փոստի հասցե՝ bedeck.llc@mail.ru
info@bedeck.am
Հեռ.՝ (+374) 98 12 55 22
(+374) 11 57 55 52

ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» ՍՊԸ-ի միջև 26.05.2025թ. կնքված №ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում (20.08.2025թ. Պայմանագրին կից կնքված №1 Համաձայնագիր) «Բիդեք» ՍՊԸ-ն պետք է կատարեր 163,000,000 (հարյուր վաթսուներեք միլիոն) ՀՀ դրամի շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ մինչև 20.12.2025թ, որից Ընկերությունը կատարել է 23,458,139 ՀՀ դրամի աշխատանք:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, և «բ» Կապալառուն խախտել է պայմանագրի 1.2 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), ենթակետերը՝ (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ.-ի մարտի 20-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը (2025թ՝ 139,541,861 դրամի չափով, 2026-2027թթ.՝ ամբողջությամբ):

Տեղեկացնում եմ, որ «Բիդեք» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական ***900005028106*** հաշվեհամարին փոխանցել ***3,815,000*** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և ***234,581*** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) որը հաշվարկված է լուծման որոշմում կայացնելու օրվա դրությամբ (**23.01.2026թ.**): Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է՝ ***76,300,000*** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է՝ ***187,037,442*** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև **2026թ. մարտի 30-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **76,300,000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **187,037,442** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա **«Բիդեք» ՍՊԸ-ն** չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2026թ. մարտի 30-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ